ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 105

« 23 » դեկտեմբերի 2016թ.

Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա.Նալբանդյանին

Եղեգնուտի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու թիվ 27-Ն և 28-Ա որոշումները:

Առդիր՝ որոշումներ և հավելվածներ:

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37 էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի N 27 Ն

## ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով

Համայնքի ավագանին որոշեց

Հաստատել Եղեգնուտ համայնքի 2017-2021թթ.-երի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| | | | |
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Գալստյան Մեյրան | | | |
| Պողոսյան Վաթուր | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար _____ Մ.Հովհաննիսյան
անուն ազգանուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016թ.-ի թիվ 27 որոշմամբ

նիստի ամսաթիվը

ԵՂԵԳՆՈՒՏ 2017թ.

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... 5
2.1. Համայնքիընդհանուրնկարագրություն ..... 5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... 6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... 7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... 9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ..... 12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ..... 13
3.1. Համայնքիզարգացմանտեսլական ..... 13
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... 13
4. ՀԶԾ ֆինանսավորում ..... 15
5. ՀԶԾ մոնիթորինգ ..... 15

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Եղեգնուտ համայնքի զարգացման ծրագիրը: Այն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արդյունավետ կառավարում իրականացնելու գործում նշանակալից դեր ունի հնգամյա զարգացման ծրագրի ընդունումը և հաստատումը: Անցած տարիների փորձը ցույց է տվել, որ նմանօրնակ զարգացման ծրագրերը (նախկինում քառամյա), իրոք նպաստել են համայնքի առջև ծառացած սոցիալ տնտեսական խնդիրների լուծմանը: Անցած քառամյա ծրագրում (2013-2016թթ.) նախանշված խնդիրների զգալի մասը կատարվել է: Քառամյա ծրագրով նախատեսված է եղել 5 կարևորագույն խնդիր, որից 4-ը կատարվել է: Դրանք են՝

1. Մանկապարտեզի շենքային պայմանների բարելավում, վերանորոգում և կահավորում: Խնդիրը լուծվել է Հայաստանի Սոց-ներդրումների հիմնադրամի և համայնքապետարանի բյուջեի միջոցներով: Ծախսվել է շուրջ 2 մլն դրամ:
2. Բարելավել և վերանորոգել ներհամայնքային ճանապարհները՝ շուրջ 3.5կմ երկարությամբ: Լուծվել է նաև այս խնդիրը, որի համար ծախսվել է 25 մլն դրամ, մարզպետարանի միջոցներով և համայնքապետարանի ֆինանսական ներդրումով:
3. Նախատեսված շուրջ 4կմ երկարությամբ ջրամատակարարման ցանցի վերանորոգման և վերակառուցման նպատակով հատկացվել է 10 մլն դրամ, 10% համայնքային ներդրումով: Այս խնդիրը նույնպես լուծվել է:
4. Հրատապ ծրագրով և ՀՀ Սոց-ներդրումների հիմնադրամով վերակառուցվել է դպրոցի շենքը՝ տանիքի լրիվ փոխարինմամբ, սպորտդահլիճի վերակառուցմամբ և ջեռուցման համակարգի տեղադրմամբ: Ծրագրի արժեքը 55 մլն դրամ:

Նշված փաստերը վկայում են, որ իրոք համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը ունի էական նշանակություն համայնքի խնդիրների լուծման դրական գործում:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Եղեգնուտ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

1. ներհամայնքային ճանապարհների վերանորոգում,
2. փողոցային լուսավորության անցկացում
3. ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի կառուցում,
4. գազամատակարարման ցանցի ընդլայնում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Եղեգնուտ համայնքը հիմնադրվել է 1856թ.: Այն գտնվում է Հայաստանի հյուսիս - արևելյան կողմում, Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջանում: Հարևան է Վահագնի և Դեբետ համայնքներին: Մոտ է երկաթուղուն և Ալավերդի – Վանաձոր մայրուղուն: Համայնքի մայրաքաղաքից հեռու է 155 կմ, իսկ մարզկենտրոնից 25 կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1240 մ: Բնությունը մեղմ է, երեք կողմից շրջապատված է անտառներով , որոնք հարուստ են հատապտուղներով: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ առավել շահույթ ստանում են անասնապահությունից: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1225 հա, որից վարելահող՝ 130 հա, խոտհարք՝ 151 հա, արոտավայրեր՝ 58 հա, այգի՝ 6 հա, այլ հողատեսքեր՝ 667 հա: Սեփականաշնորհված հողերը կազմում են 243 հա: Համայնքի հիմնադիրները եղել են Վահագնիից և Թումանյանի շրջանի Մարց համայնքից վերաբնակեցված ընտանիքները:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 1000,

այդ թվում՝

մինչև 6 տարեկան – 55

7-10 տարեկան – 17

11-14 տարեկան – 41

15-17 տարեկան – 30

18-22 տարեկան – 70

23-45 տարեկան – 268

46-62 տարեկան – 350

63 և ավելի – 169

Բնակչության սոցիալական կազմը՝

այդ թվում՝

թոշակառուներ – 185

հաշմանդամներ – 24

աշխատանք ունեցողներ – 40

գործազուրկներ – 500

ընտանիքների (ծխերի) թիվը – 260

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 19172.2 հազար դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2707.7 հազար դրամ (14%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

| Ձեռնարկություններ | Քանակը | Եկամուտներ,հազ. |
|---|---|---|
| Խանութներ | 1 | 24000 |
| Քարի վերամշակման արտադրամաս | 2 | 60000 |
| Թռչնանոց | 1 | 20000 |
| Ավազահանք | 1 | 120000 |

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

| Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը | Ցանքատարածության չափը | Արտադրանքի քանակը |
|---|---|---|
| կարտոֆիլ | 36 հա | 30 g |
| բանջարեղեն | 3.2 հա | 182 g |
| միս | | 2տ |
| ձու | | 50 հազ.հատ |
| մեղր | | 1տ |

| Անասունների տեսակը | Գլխաքանակը |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 706 |
| Այդ թվում կովեր | 296 |
| Մանր եղջերավոր անասուններ | 18 |
| խոզեր | 109 |
| թռչուններ | 9693 |
| Այդ թվում հավեր | 9693 |
| մեղվաընտանիքներ | 180 |
| ձիեր | 25 |

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 79 աշակերտ:

Դպրոցն ունի 20 աշխատող:

- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում են 15 երեխա:

Նախակրթարանն ունի 5 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժ-ամբուլատորիա, որն սպասարկում է համայնքի բնակիչներին:

Բուժ-ամբուլատորիան ունի 1 աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 40 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 50%:

### 2.3. *Համայնքում իրականացվող ծրագրերը*

- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը: Նախատեսված են միջհամայնքային համագործակցության նպատակային միջոցառումներ՝ սպորտային մրցումներ և վիկտորինաներ;
- ԱՄՆ-ի միջազգային զարգացման գրասենյակի կողմից ֆինանսավորվող ծրագրով նախատեսվում է կաթի վերամշակման արտադրամասի շահագործումը:

Միջհամայնքային ծրագրով Եղեգնուտ, Դեբետ և Վահագնի համայնքների բնակիչների համար հասանելի կդառնա հասարակական տրանսպորտը: Գյուղացիների համար դյուրին կդառնա բուժ-սպասարկման հաստատություններին, սպառման շուկաներին և գլխավոր մայրուղուն հասնելը: Այն կնպաստի գյուղացիների ապրելակերպի բարելավմանը և առողջության պահպանմանը:

## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

| N | Եկամուտի տեսակը | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ | 19172.2 հազար | 19672.2 հազար | 19972.2 հազար | 20000.0 հազար | 20500.0 հազար |
| Ա | Հարկային եկամուտներ | 2168.4 հազար | 2198.4 հազար | 2200.0 հազար | 2220.0 հազար | 2240.0 հազար |
| 1 | Հողի հարկ | 1243.9 հազար | 1243.9 հազար | 1243.9 հազար | 1243.9 հազար | 1243.9 հազար |
| 2 | Գույքահարկ | 924.5 հազար | 954.5 հազար | 956.1 հազար | 976.1 հազար | 996.1 հազար |
| 3 | Եկամտահարկ | | | | | |
| 4 | Այլ հարկային եկամուտներ | | | | | |
| Բ | Տուրքեր | | | | | |
| 1 | Պետական տուրքեր | | | | | |
| 2 | Տեղական տուրքեր | 34.0 հազար | 34.0 հազար | 34.0 հազար | 34.0 հազար | 34.0 հազար |
| Գ | Ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| 1 | Վարձավճարներ | 505.3 հազար | 505.3 հազար | 505.3 հազար | 505.3 հազար | 505.3 հազար |
| 3 | Տեղական վճարներ | | | | | |
| 4 | Այլ ոչ հարկային եկամուտներ | | | | | |
| Դ | Դոտացիա | 16464.5 հազար | 16934.5 հազար | 17232.9 հազար | 17240.7 հազար | 17720.7 հազար |
| Ե | Եկամուտներ կապիտալ գործառություններից | | | | | |
| Զ | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | | |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Եղեգնուտ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

. ֆինանսի բացակայությունը

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,

.մշակույթի տան բացակայությունը.

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

.ծայրամասային թաղամասերի գազաֆիկացման բացակայությունը

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

8) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

9) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ցանցի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

.գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը:

10) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

12) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում բնական աղետները (երաշտ, կարկուտ և այլն), որից գյուղացիները կորցնում են բերքի զգալի մասը,

բ/ աշխատատեղերի բացակայությունը,

գ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

դ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀԱ) վերլուծություն

| *Համայնքի ուժեղ կողմեր* | *Համայնքի թույլ կողմեր* |
|---|---|
| .Բանիմաց աշխատուժի առկայություն<br>.Միջնակարգ դպրոցի առկայություն.<br>.ՀՈԱԿ-ի առկայությունը<br>.Բուժ-ամբուլատորիայի առկայություն<br>.Հեռահաղորդակցության առկայություն<br>.Գազաֆիկացման մասնակի առկայություն<br>.Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն<br>.Մարզկենտրոնից մոտ լինելը<br>.Համայնքի աշխարհագրական դիրքը<br>.Հատապտուղներով հարուստ անտառի առկայությունը | .Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ<br>.Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ<br>.Ֆինանսական ռեսուրսների բացակայություն<br>.Ծնելիության նվազում<br>.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ<br>.Թերզբաղվածության բարձր մակարդակ<br>.Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ<br>.Աշխատատեղերի պակաս<br>.Տուն կորցրած շահառուների առկայություն<br>.Բնակչության մի մասի չգազաֆիկացված լինելը |
| *Հնարավորություններ* | *Սպառնալիքներ* |
| .Խմելու ջրի պաշարի առկայություն<br>.Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն<br>.Ավազահանքի առկայություն | .Տարերային աղետների վտանգ<br>.Գյուղ. մթերքների գների նվազում<br>.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն<br>.Արտագաղթ |

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել անասնապահությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Նվազեցնել աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը,
- Պահպանել համայնքի սեփական տարեկան եկամուտների 100%-ը:

### 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
3) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
4) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
5) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
6) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
7) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
9) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
10) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
11) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
12) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
18) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

## 4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

## 5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

Աշխատակազմի քարտուղար՝ Կ.Ավետիքյան

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

## «ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի բնակավայրի կառուցապատունը և բարեկարգումը | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Լուսավորման կետերի ավելացում | | | | | | |
| | **Ցուցանիշներ** | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | Փողոցային լուսավորության կետերի ավելացում | 0 | 0 | 10 կետ | 10 կետ | 10 կետ | 10 կետ |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1.1 լուսամփոփների ձեռք բերում<br>1.2 հաղորդալարերի ձեռք բերում<br>1.3 հենասյուների ձեռք բերում<br>1.4 փողոցային լուսամփոփների տեղադրում | | | | | | |
| Ծրագրի ընդհանուր արժեք | Ընթացիկ ծախսեր՝ 500 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2,5 մլն.դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Ֆինանսական միջոցների առկայություն<br>2,Աշխատանքների կատարման պատրաստակամություն<br>3,Հենասյուների որոշակի քանակի առկայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների ձեռքբերումը | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն , համայնք | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018թ- 2021թ | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ծրագրի իրականացման արդյունքում Եղեգնուտ համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք : | | | | | | |

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

## «Ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրիանվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով ապահովում:</td></tr>
<tr><td rowspan="5">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ<br>կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>1 կմ</td><td>1 կմ</td><td>1.5 կմ</td><td>0 կմ</td><td>0 կմ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:<br>1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:<br>1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:<br>1.4.Հեղեղատարներ կառուցել:</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր արժեքը</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝ 1.5 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 3.5 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 5 մլն դրամ</td></tr>
<tr><td>Համայնքի ֆինանսական ներդրում</td><td colspan="6">ծրագրի ընդհանուր արժեքի 10%-ի չափով</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Եղեգնուտ համայնքի բոլոր բնակիչները և հարևան 2 համայնքների բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2019թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  3

« **Որակյալ խմելու ջրով ապահովում և ներքին ցանցի կառուցում**»
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Եղեգնուտ համայնքի բնակչության համար ապահովել 24-ժամյա ջրամատակարարում:</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովում</td></tr>
<tr><td rowspan="5">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0 կմ</td><td>1 կմ</td><td>2 կմ</td><td>2 կմ</td><td>2 կմ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:<br>1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:<br>1.4.Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:<br>1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր արժեքը</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 8 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 20 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 28 մլն դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Եղեգնուտ համայնքի բոլոր բնակիչները:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2021թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին,բնակչության մի մասը չի ապահովված 24-ժամյա ջրամատակարարմամբ, ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքում առկա հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:</td></tr>
</table>

# Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  4

« **Գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնում**»
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Եղեգնուտ համայնքի բնակչությանը ապահովել բնական գազով:</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Համայնքաբնակներին բավարար քանակի բնական գազով ապահովում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Ընդլայնված գազամատակարարման ցանց:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0.5 կմ</td><td>0.5 կմ</td><td>0.5 կմ</td><td>0.5 կմ</td><td>0 կմ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1.1. Գազամատակարարման ներքին ցանցի կառուցում:</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր արժեքը</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 8 մլն դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">դրամական միջոցների ձեռքբերումը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Եղեգնուտ համայնքի բնակչության մի մասը:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2020թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Ներկայումս համայնքի բնակչության մեծ մասը ապահովված չէ բնական գազով: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակիչների մի մասը կապահովվեն բավարար քանակի բնական գազով, կբարելավվի բնակչության կենցաղային պայմանները:</td></tr>
</table>

ՀՀԶՀ ՖԻՆԱՆՍԱՎՈ
ԵՂԵԳՆՈՒ
(2017-

| Պարտադիր խնդիր | Բյուջետավորված միջոցներ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| **1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում** | | | | | | |
| **2. Համայնքի գույի և դրամական միջոցների կառավարում** | | | | | | |
| **3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | | | | | | |
| **4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | |
| **5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն** | | | | | | |
| **6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** | 2.0մլն.դ. | | | 2.0մլն.դ. | | |
| **7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** | | | | | | |
| **8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** | 10մլն.դ. | | 10մլն.դ. | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում** | | | | | | |
| **10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը** | | | | | | |
| **11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | | | | | | |
| **12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը** | 15մլն.դ. | 15մլն.դ. | | | | |
| **13. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծում** | | | | | | |
| **14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում** | | | | | | |
| **15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում** | | | | | | |
| **16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում** | | | | | | |
| **17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում** | | | | | | |
| **18.Համայնքային հասարակակն կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում** | | | | | | |
| **19.Համայնում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքայյուրի ազատ հաղորդակցման նպաստում:** | | | | | | |
| **20. Բարեգործության խթանում** | | | | | | |

ՈՒՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՏԻ ՀԱՄԱՅՆՔ
2021 թթ.)

| Ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | Բարեգործություն/նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| 0 | | | | | | 0.5մլն.դ. | 1.5մլն.դ. | | | | լուծված չէ |
| | | | | | | | | | | | |
| 0 | | | | | | 5մլն.դ. | 5մլն.դ. | | | | լուծված չէ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| 0 | | | | | | 7մլն.դ. | 8մլն.դ. | | | | լուծված չէ |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

ԵՂԵԳ

( 2017-

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2015) | Ցուցանիշի կանխատեսվող արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Համայնքի կայուն զարգացում** | | | | | | | | |
| **1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում** | | | | | | | | |
| **2. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում** | | | | | | | | |
| կառուցված ջրագիծ կմ | | | | | | 1 | | |
| **3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն** | | | | | | | | |
| **4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | | | |
| **5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն** | | | | | | | | |
| **6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** | | | | | | | | |
| **7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** | | | | | | | | |
| **8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** | | | | | | | | |
| փողոցային լուսավորության անցկացում, կետ | | | | | | 10 | | |
| ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, կմ | | | 1 | | | 1 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում** | | | | | | | | |
| **10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը** | | | | | | | | |
| **11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | | | | | | | | |
| **12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանում** | | | | | | | | |
| **13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն** | | | | | | | | |
| **14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում** | | | | | | | | |
| **15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում** | | | | | | | | |
| **16.Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում** | | | | | | | | |
| **17.Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում** | | | | | | | | |
| **18. Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում** | | | | | | | | |
| **19.Համայնքում առկա ազգային և համարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցման նպաստում** | | | | | | | | |
| **20.** Գազամատակարարման ներքին ցանցի ընդլայնում, կմ | | | 0.5 | | | 0.5 | | |

ՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔ
-2021թվականներ)

| Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման | | Ցուցանիշի ստացման աղբյուր | Ցուցանիշի ստացման մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| 2 | | | 2 | | | 2 | | | | X | Համայնքապետարան | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| 10 | | | 10 | | | 10 | | | | X | Համայնքապետարան | |
| 1.5 | | | | | | | | | | X | Համայնքապետարան | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| 0.5 | | | 0.5 | | | | | | | X | Համայնքապ ետարան | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3-րդ փող. N 2,
Հեռախոս՝ 6 83 37
Էլ.Փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2016 թվականի N 28-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Եղեգնուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Գալստյան Սեյրան | | | |
| Պողոսյան Արթուր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Հովհաննիսյան

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

**Հավելված**
**ՀՀ Լոռու մարզի**
**Եղեգնուտ համայնքի ավագանու**
**2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 28 որոշման**

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ղազարյան Արսաբեկ Հովհաննեսի — երեսուն հազար դրամ,
( Անուն, ազգանուն,հայրանուն)
2) Մաթևոսյան Եվգինե Գեղամի — երեսուն հազար դրամ,
( Անուն, ազգանուն,հայրանուն)
3) Հակոբյան Ֆլորա Հմայակի — երեսուն հազար դրամ:
( Անուն, ազգանուն,հայրանուն)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ իններսուն հազար դրամ:

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Կ.Ավետիքյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)